ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ԿԱՍԵՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հուլիսի 26-ի N 693-Ա հրամանի համաձայն՝ վերսկսում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 94-3.4-Մ5-1) կասեցված ներքին մրցույթի դիմումների ընդունումը և մրցույթի անցկացումը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 94-3.4-Մ5-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող ներքին մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, մարզպետարանի վարչական շենք) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),

2. անձնագիր և (կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),

3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,

4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,

5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,

6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի **հուլիսի 26-ից** մինչև 2021 թվականի **հուլիսի 29-ը** ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օրը ընդունվում են ժամը **10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը**:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի **սեպտեմբերի 28-ին՝ ժամը 15:00-ին**, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի **սեպտեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին**, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **«Հարցարան»** ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 129 600 (մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ է: Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

ՀՀ Սահմանադրություն. հոդվածներ՝ 1-2, 5-8, 10, 14-16, 18, 20-21, 25, 27, 32, 35-38, 40-41, 44, 46-47, 49, 57, 58, 64, 70, 72-73, 103 հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510,

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 22-23, 34, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152139,

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք. Հոդվածներ՝ 1, 4, 6, 9, 14, 17, 31, 53 հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154457

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 10, 18, 20, 22-24, 38, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138910

«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 5-8, 18-21, **հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154477**

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 1-2, 4-7, 9, 11-12, հղումը՝

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90804,

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4-6,9-11, 13-14, 17-20, 22, 24-26, 32, 34, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149836:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի **«Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1919-ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 269-Ն որոշում,** հղումը՝ **https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=82484**

Գրավոր խոսք: Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակչություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70-111: Հղումը՝ http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf

Ինֆորմատիկա 7-րդ դասարան:

Ա 971, Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Երևան, Տիգրան Մեծ, 2012: Հղումը՝ https://fliphtml5.com/fumf/egdx

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ հղումը՝ https://www.gov.am/am/announcements/item/346/

Հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես.

«Խնդրի լուծում» Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

«Հաշվետվությունների մշակում» Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման

բաժին (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, մարզպետարանի վարչական շենք, հեռախոսահամար՝ 60650626, էլեկտրոնային փոստի հասցե՝ gegharquniq.andznakazm@mta.gov.am):

Հավելված N 104
Հայաստանի Հանրապետության

Գեղարքունքի մարզպետարանի
Գլխավոր քարտուղարի
2019 թվականի դեկտեմբերի 20-ի N 1149-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԸՆՏԱՆԻՔԻ,ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուրդրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝Մարզպետարան)

Ընտանիքի ,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի (այսուհետ՝Բաժին) ավագ մասնագետ (այսուհետ՝Ավագ մասնագետ)

(ծածկագիրը՝ 94-3.4-Մ5-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն ենթական և հաշվետու է Բաժնի պետին.

1.3Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ , ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) մասնակցում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացմանը:

2) մասնակցում է Մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի /թրաֆիկինգ/ հիմնահարցերի ուսումնասիրության և զոհերի սոցիալական վերականգնմանն

ուղղված ծրագրերի մշակմանը, ինչպես նաև հայտնաբերված զոհերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը.

3) ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ մասնակցում է իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների /կամ նրանց օրինական ներկայացուցիչների/ հետ իրականացվող աշխատանքներին.

4) մասնակցում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությանը, սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրի մշակման աշխատանքները, մասնակցում է դրանով նախատեսված միջոցառումներին, խմբային /բազմամասնագիտական/ քննարկումներին.

6)հաշվի առնելով երեխայի լավագույն շահը՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում իրականացնում է առկա տարաձայնությունների լուծումը

7)իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը.

8)մասնակցում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների հաշվառմանը.

9)մասնակցում է հանրակրթությունից դուրս մնացած երեխաների, մանկուց հաշմանդամ երեխաների, սոցիալապես անապահով ընտանիքների, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում գտնվող երեխաների հաշվառմանը.

10)պաշտոնական անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքին և առողջությանը սպառնալուն իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում մասնակցում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությանն անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման աշխատանքներին.

11)մասնակցում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին և դատական նիստերին.

12)բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի շուրջօրյա հաստատությունում բնակվող երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու դեպքում մասնակցում է կենսապայմանների ուսումնասիրությանը.

13)Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլփաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ.

14)իրլիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրերևայլգրություններ.

Իրավունքները՝

1)Ստանալ տեղեկատվություն, անձնական փաստաթղթերի փաթեթ՝ համապատասխան մարմիններից, համագործակցել ստորաբաժանումների կառույցների հետ

2)Մասնակցել ծրագրերի մշակման աշխատանքներին, մասնագիտական քննարկումներին

3)Մասնակցել աշխատանքային քննարկումներին, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող քննարկումներին, սեմինարներին, դասընթացներին

4)Մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին՝ վերապատրաստումների միջոցով

5)Նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

6) Ծանոթանալ աշխատանքային պարտականություններից բխող իրական ակտերին .

Պարտականությունները՝

1)Ներկայացնել Մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացումն ապահովելու համար առաջարկություններ կամ կարծիքներ, ապահովել մասնակցությունը

միջոցառումներին, կլոր-սեղան քննարումներին, խորհրդակցություններին, սեմինարներին դասընթացներին.

2)Մասնակցել ծրագրերի միջոցառումների իրականացմանը, հաշվետվությունների կազմմանը, ներկայացնել առաջարկություններ.

3)Հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) վերաբերյալ, կատարել անձի կերպարի հոգեբանական վերլուծություն և պատկերի կազմում, կազմակերպելիանդիպումներքաղաքացիներիևհամապատասխանկառույցներիներ կայացուցիչներիհետ, մասնակցելդեպքիքննարկումներինշահագրգիռկողմերիհետ, պատրաստելիամապատասխանգրություններ.

4)Մասնակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերման աշխատանքներին, կատարել անձի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, իրականացնելկարիքներիգնահատում, կազմելսոցիալ-հոգեբանականվերականգնողականծրագրեր.

5)Վերահսկելկյանքիդժվարինիրավիճակումհայտնվածերեխաներիանհատականսոցիալ-հոգեբանականվերականգնողականծրագրերիիրականացումը, մասնակցելխմբային (բազմամասնագիտական) քննարկումներին.

6)Մասնակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին, տալ մեթոդական ցուցումներ, կատարել տնային այցելություններ, ըստ անհրաժեշտության՝ մասնակցել դեպքի քննարկման և վարման աշխատանքներին.

7)Ապահովել մասնակցությունը դատական նիստին, անհրաժեշտության դեպքում կազմել համապատասխան տեղեկատվություն.

8)Իրականացնել ԱԾԽՄ երեխաների և նրանց թվին պատկանող անձանց տարածքային հաշվառումը, անձնական քարտի պատճենը ուղարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝կենտրոնացված հաշվառում իրականացնելու նպատակով.

9) Աջակցել երեխայի ժամանակավոր խնամքի կազմակերպման աշխատանքներին.

10)Մասնակցել հանրակրթությունից դուրս մնացած և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման և հաշվառման աշխատանքներին.

11)Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայիներառականկրթականհամակարգում ընդգրկվելու իրավունքի իրականացմանը, ապահովում է սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրի իրականացումը.

12) Մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների հետ կազմակերպել հանդիպում-քննարկումներ, հետագավարքայինշեղումներըկանխելունպատակովտրամադրելիոգեբանականխորհրդատվություն, մասնակցելանչափահասներիհարցաքննությանը.

13)Մասնակցել երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին տարեկան հաշվետվության կազմման աշխատանքներին.

14) Նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սոցիալական բնագավառում ՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ: **Փոփ. 27.02.2020թ. N321**

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1.Խնդիրների լուծում

2.Հաշվետվությունների մշակում

3.Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն

4.Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1.Բողոքների բավարարում
2. Ժամանակի կառավարում
3.Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4.Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման կամ մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման կամ մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին աջակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացմանն օժանդակության շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև այլ համապատասխան մարմինների ներկայացուցիչների հետ ընդգրկվում է տվյալ մարմնի ներսում ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: